ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հունիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

82
(2932)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

2021 թվականի սեպտեմբերի 8-ից Գեղարքունիքի մարզի մարզպետ նշանակված Կարեն Սարգսյանը 2023 թվականին միանձնյա սեփականությամբ նոր հողամաս է ձեռք բերել Կոտայքի մարզի Ձրվերժ համայնքում, որի արժեքը կազմել է 12 մլն 500 հազար դրամ՝ գրեթե 32 հազար ԱՄՆ դոլար:

Նախկինում Հայաստանում որեւէ գույք չունեցող մարզպետը կառավարման 3 տարում 12,5 մլն դրամ արժողությամբ հողամաս է ձեռք բերել, ըստ ամենայնի, օգտագործելով մարզպետի իր հնարավորություններն ու կապերը (մանրամասները կպարզենք):

Կարեն Սարգսյանը որպես անշարժ գույք հայտարարագրել է նաեւ դեռ վաղեմի՝2013 թվականին Ռուսաստանի Դաշնությունում գնված բազմաբնակարան շենքում գտնվող 1 բնակարան:

Այս բնակարանի ձեռքբերումը համընկել է Սարգսյանի արտագնա աշխատապքի տարիներին՝2009-ից 2015 թվականներին, երբ նա էլ շարքային «խոպանչի» էր ՌԴ-ում ու չէր էլ հարկվում հավանաբար:

Նկատենք, որ ՀՀ-ում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող Կարեն Սարգսյանը 2016 թվականից մինչ օրս՝ գրեթե 8 տարի, այդպես էլ չի կարողանում ավարտել Մոսկվայի մարզային իրավունքի եւ կառավարման ինստիտուտի մենեջմենթի բաժինը, քանի որ, ըստ կենսագրության, մինչեւ այսօր սովորում է այնտեղ, եւ ինչպես ինքը կպարզաբաներ՝մարզպետ լինելուն զուգահեռ չի կարողանում ավարտել այն. այս հարցերի պարզաբանման նպատակով արված «Ժողովուրդ» օրաթերթի հեռախոսազանգերին Սարգսյանը չպատասխանեց:

Նշենք՝մարզպետ Կարեն Սարգսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 126 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝4 մլն 500 հազար դրամ:

Գեղարքունիքի մարզի նախկին «խոպանչի» մարզպետի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 976 հազար դրամ:

Կարեն Սարգսյանը Թռչուն Սարգսյանից նախորդ տարի ստացել է 700 հազար ռուբլի նվիրատվություն, որ համարժեք է 3 մլն եւ ավելի դրամի:

Ըստ մարզպետի կենսագրության՝նախկին մարզական լրագրող Կարեն Սարգսյանն այսօր զբաղեցրած պաշտոնում ստանում է 13 մլն 952 հազար դրամ աշխատանքի վարձատրություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի, ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնից հասկանում ենք, որ Կարեն Սարգսյանին պատկանող բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը կազմել է 3 մլն 700 հազար ռուբլի՝գրեթե 16 մլն դրամ: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***



Իշխանություններն այս օրերին, կարելի է ասել, տոնական տրամադրությունների մեջ են, քանի որ, ըստ նրանց, Բագրատ սրբազանի առաջնորդած շարժումը վերջնականապես «մարած» է: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ թիմակիցների հետ Սյունիքի մարզի կիրակնօրյա հանդիպման ժամանակ ասել է, որ «Սրբազան շարժումը» իրենց համար արդեն սպառնալիք չէ, ամեն բան «կոնտրոլի» տակ է, ու, կարելի է ասել, շարժումը «պառակտել» են: Ըստ մեր աղբյուրի՝Փաշինյանը շատ բարձր տրամադրություն ունի, թիմի անդամների հետ արդեն շատ սիրալիր է ու բոլորին ակնհայտ ցույց է տալիս, թե ամուր կանգնած է՝իշխանությունը իրենց ձեռքից չեն կարող խլել: Իշխանականներն էլ մեզ հետ մասնավոր զրույցներում վստահեցնում են, որ իրենք մտահոգություններ այլեւս չունեն, քանի որ ակնհայտ է, որ փողոց մարդ դուրս չի գալու ու Բագրատ սրբազանը այդ մի քանի հազար հոգով ի վիճակի չէ իշխանափոխություն իրականացնելու: Իսկ Բագրատ սրբազանը հակառակն է պնդում ու նշում, որ իրենք նոր ծրագրեր ունեն, նոր թափ է հավաքում շարժումը, որի մասին էլ այսօր հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ նա կխոսի:

Հուլիսի 4-ին կկայանա Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության՝«ընդդեմ Երեւանի ավագանու որոշման» գործով դատական առաջին նիստը: Խոսքը ավագանու ընդդիմադիր անդամներին մանդատներից զրկելու հարցով որոշման մասին է: Այսպիսով՝դեռ փետրվարի 7-ին կայացած նիստում Երեւանի ավագանին որոշեց ընդդիմադիր «Մայր Հայաստան» խմբակցության 2 անդամներին՝Նարինե Հայրապետյանին եւ Սոնա Աղեկյանին զրկել մանդատից: Ավագանու ընդդիմադիր անդամներին մանդատից զրկելու համար քաղաքային իշխանությունները հիմք էին վերցրել նախագծերի քվեարկություններին չմասնակցելը. մինչդեռ նրանք խմբով էին բոյկոտել նիստերը՝իբրեւ դժգոհության արտահայտում: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ մարտին հայտնել էր, որ «Մայր Հայստան» խմբակցությունը հայց էր ներկայացրել Վարչական դատարան՝վիճարկելու Սոնա Աղեկյանին մանդատից զրկելու որոշումը, իսկ Նարինե Հայրապետյանի մասով թղթաբանական խնդիրներ էին առաջացել, քանի որ վերջինս երկրում չէր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հուլիսի 4-ին կայանալու է այս գործով առաջին նիստը՝դատավոր Գրիգոր Առաքելյանի նախագահությամբ:

ՀՀ քննչական կոմիտեն թերեւս պետք է անվանափոխել՝դարձնելով «ՀՀ քաղպայմանագիր կուսակցության կոորդինացիոն կենտրոն». ինչո՞ւ, քանի որ հերթական անգամ աչք է փակում ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեմ ներկայացված հանցագործության մասին հաղորդման վրա: Արգիշտի Քյարամյանն այդպես էլ չլսեց ու չտեսավ «ականջ ու լեզու կտրող» խուլիգանական վարքագծի հեղինակ, թմրանյութերի գործով անցած Արթուր Հովհաննիսյանի հանցանքները: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ Գլխավոր դատախազությունը ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեմ ներկայացված հաղորդումը ուղարկել է ՀՀ քննչական կոմիտե՝ստուգման: Ինչպես հայտնի է, «Հայաստան» խմբակցության պատգամավորները հանցագործության մասին հաղորդում էին ներկայացրել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեմ: Արծվիկ Մինասյանը Armlur.am-ի հետ զրույցում հաստատել էր տեղեկությունը: Իսկ ինչ էր արել Արթուր Հովհաննիսյանը. մասնավորապես, նա մայիսի 1-ին ԱԺ ամբիոնից նշել էր, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը իր՝«կարմիր գծեր» անցնող հայտարարություններով ամեն ինչ անում է, որ եւս մեկ անգամ իր քթի վիրահատությանը «անդրադառնա»: Բանն այն է, որ 2023 թվականի սեպտեմբերի 20-ին՝կառավարության շենքի մոտ տեղի ունեցած բախումների ժամանակ, վնասվածք էր ստացել նաեւ պատգամավոր Գեղամ Մանուկյանը, որի քիթը վիրահատեցին: Եվ ահա, ըստ էության, Արթուր Հովհաննիսյանը միգուցե իր այս հայտարարությամբ փորձել է հասկացնել Գեղամ Մանուկյանին, որ «կարմիր գիծը» չհատի, այլապես քիթը կրկին կկոտրեն ու ստիպված կլինի երկրորդ անգամ այն վիրահատելու: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Օրեր առաջ 4 քաղաքական ուժ՝ «Հանրապետություն» կուսակցությունը, «Հանուն Հանրապետության», «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» եւ «Հայաստանի եվրոպական» կուսակցությունները Հայաստանի՝ Եվրոպական միությանն անդամակցության հայց ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկով դիմել են ԱԺ:

«Ժողովուրդ» օրաթերթը այս թեմայով զրուցել է «Հայաստանի եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանի հետ:

-Օրեր առաջ մի քանի քաղաքական ուժեր՝ «Հանրապետություն», «Հանուն Հանրապետության», «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» եւ Ձեր ղեկավարած՝ «Հայաստանի եվրոպական» կուսակցությունները համատեղ դիմում են ներկայացրել իշխանություններին՝ հանրաքվեի դնելու ԵՄ-ին անդամակցելու հարցը: Սա ի՞նչ գործընթաց է իրենից ենթադրում, ի՞նչ փուլեր պետք է իրար հաջորդեն եւ իշխանությունից ի՞նչ արձագանք կա:

-Սա պարզապես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջն է: Ըստ Սահմանադրության 205-րդ հոդվածի՝ որեւէ վերպետական կառույցի Հայաստանի Հանրապետությունը կարող է անդամակցել միայն հանրաքվեի արդյունքում: Մենք հիմա անդամակցում ենք մի քանի վերպետական կառույցների, որոնց անդամակցումը հանրաքվեի արդյունք չի եղել: Այդ կառույցներից են ՀԱՊԿ-ը, ԵԱՏՄ-ն, ինչը, կարծում եմ, Սահմանադրության կոպիտ խախտում է: Մենք պետք է սովորենք ապրել ըստ օրենքի, առնվազն՝ ըստ Սահմանադրության. դա բավարար է: Այստեղ, բնականաբար, կան քաղաքական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական եւ Հայաստանի դեպքում՝ առաջին հերթին անվտանգային հիմնահարցեր, որոնց լուծումը, իմ խորին համոզմամբ, պետք է տրվի հենց Եվրամիությանը եւ ՆԱՏՕ-ին: Համենայնդեպս այդպիսին է «Հայաստանի եվրոպական» կուսակցության քաղաքական ծրագիրը եւ հիմա մենք տեսնում ենք, որ այս ծրագիրը դառնում է պետական քաղաքականություն:

-Պարոն Խզմալյան, հաշվի առնելով մյուս երկրների փորձը, օրինակ՝ հենց Թուրքիայի, մենք տեսնում ենք, որ այս գործընթացը բավականին երկար է տեւում: Արդյոք կա՞ երաշխիք, որ ժամանակ եւ ռեսուրս ներդնելու դեպքում՝ մենք տարիներ անց հստակ արդյունք կունենանք, քանի որ Եվրամիությունից էլ հստակ արձագանք այս հարցում չի եղել:

-Ես չեմ կարող համաձայնել Ձեր արած համեմատության հետ, քանի որ Թուրքիային ԵՄ կազմում չընդունելու հիմնական պատճառը հենց Հայաստանն է:

-Նկատի ունենք գործընթացը, որը բավականին երկարատեւ է:

-Այստեղ հարցը գործընթացը չէ: Թուրքիան շատ հստակ պատասխան է ստացել այն մասին, որ Եվրամիության անդամ չի դառնալու, եւ հիմնական պատճառներից մեկը հենց Հայոց Մեծ Եղեռնի իրողությունն է. դա քաղաքակրթական արժեհամակարգի տարբերություն է, իսկ Եվրոպան, ԵՄ-ն, ոչ թե քրիստոնեական ակումբ է, ինչպես ասում են թուրքերը, այլ արժեհամակարգով միավորված երկրների միություն է:

Ինչ վերաբերում է ԵՄ արձագանքին, ապա անցյալ ամիս Եվրախորհրդարանում տեղի է ունեցել հատուկ նիստ, որի ընթացքում հենց այս հարցի շուրջ 504-ը 4-ի ձայների հարաբերակցությամբ քվեարկվել է հարցը. անգամ Ուկրաինայի դեպքում նման աջակցություն չի եղել:

-Երեկ նման քննարկում էր նաեւ ԱԺ-ում, եւ կարծես նույնիսկ իշխանական պատգամավորների շրջանում է դա սակարկելի:

-Մենք զգացինք, որ չկա կոնսենսուս, բայց մենք դիմում ենք Հայաստանի ժողովրդին, իսկ դրանք նրանց անձնական կարծիքներն են: Վերջերս ով ասես խոսում է ժողովրդի անունից՝ իշխանությունը, ընդդիմությունը, եկեղեցին, օտարերկրյա գործակալները. ես կարծում եմ, որ այս ամենը պետք է լուծում ստանա, իսկ լուծումը հանրաքվեն է. դա ժողովրդի կամարտահայտման բարձրագույն ձեւն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ

«Այս բռնաճնշումների ալիքը ասոցացվում է ՀՅԴ-ի հետ. ինձ համար չափազանց արտասովոր է, երբ անձին հարցաքննելիս քննիչը հարցնում է՝ կուսակցակա՞ն ես», - այս մասին երեկ՝ հունիսի 18-ին՝ ՀՅԴ-ի դեմ սկիզբ առած բռնաճնշումների թեմայով մամուլի ասուլիսի ժամանակ նշեց փաստաբան Վահե Եփրիկյանը:

«Ինձ համար անհասկանալի է, երբ անձի նկատմամբ կալանավորման միջնորդություն է ներկայացվում եւ գրվում է՝ ՀՅԴ անդամ: Այն պայմաններում, երբ այդ մարդը ՀՅԴ անդամ չէ: Կոնկրետ մի դրվագով մենք նախապես հայտարարել ենք, որ ցուցմունք չենք տալու, ու հետո որոշում ենք ցուցմունք տալ, անձը հայտարարում է, որ ես ընդհանրապես կուսակցական չեմ. ՀՅԴ անդամ չեմ. եւ սա միակ դեպքն է, որ այդ անձի նկատմամբ կիրառվեց բացակայելու արգելքի եւ գրավի խափանման միջոց: Հիմնավոր կասկածը բացակայում է»,- ասաց նա:

Եփրիկյանի խոսքով, ՀՅԴ-ի դեմ բռնաճնշումները ակնհայտ երեւում են. «Կարելի է ցանկացած հանցակազմի երկրորդ մասը որակյալ հանցակազմ սարքել, եթե ՀՅԴ-ական ես: Եթե գողություն ես արել, նորմալ է, բայց եթե դաշնակցական ես ու գողություն ես արել, արդեն ծանրացնող հանգամանք է: Այսօր կալանքների, տնային կալանքների մեծ մասը կիրառվում է երկու պարագայում, որ կամ ՀՅԴ-ական ես, կամ արցախցի ես: Այս մարդիկ պրոբլեմ ունեն ՀՅԴ-ի ու արցախցիների հետ. եթե մարդն արցախցի դաշնակցական է, իրեն ի՞նչ են անելու»:

Փաստաբանը համոզմունք հայտնեց, որ այս ամենը շարունակվելու է, քանի որ «անձը, որը շուրջ 20 տարի փրփուրը բերանին փորձել է ապացուցել, որ ոստիկանությունը 10 մարդ է սպանել, եւ կամ այն մարդիկ, որոնք մարտի 1-ը անընդհատ շահարկում են ԱԺ ամբիոնից, հայտարարում են՝ ոստիկանության աշխատողը դեռ մի բան էլ դրվատելի արարք է արել, ի՞նչ պատժելու մասին է խոսքը: Այսինքն՝ Փաշինյանը քարտ-բլանշ է տալիս ոստիկանությանը, ասում է՝ գործեք, եթե իմ աթոռի համար եք ջարդում-փշրում, սպանում, ինչ ուզում եք՝ արեք»,- հայտարարեց Վահե Եփրիկյանը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԱՍՈՎ «ԳՈՐԾ» Է ԳՏԵԼ



«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը իրավապահների եւ իշխանական թեւի կողմից ենթարկվում է տարբեր ճնշումների, հաճախ նաեւ սպառնալիքների ՀՀ գլխավոր՝ ԱԺ ամբիոնից. դրանք արվում են շարժումը մարման տանելու նպատակով:

Մասնավորապես՝ իրավապահ համակարգի ներկայացուցիչները ճնշման գործիք համարում են քրեական գործերը, որով կարող են լռեցնել շարժման մասնակիցներին, սակայն հաճախ դա անօգուտ է դառնում, քանի որ հստակ գործեր գտնելը դառնում է անհնար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ուժային կառույցները խիստ են լինելու. չեն խնայելու անգամ Բագրատ Սրբազանին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները, կարծես, գտել են Բագրատ Սրբազանի կենսագրությունում թիրախային կետեր, որոնց արդյունքում կարող են Բագրատ Սրբազանի վրա քրեական գործել «կարել»:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է Հայ-ամերիկյան առողջության կենտրոնի եւ Տավուշի թեմի համագործակցության արդյունքում ստեղծված Գետահովիտի հոգեւոր-վերականգնողական կենտրոնի մասին, որի ստեղծման հիմքում հենց Բագրատ Սրբազանն է:

Ըստ մեր աղբյուրների՝ իշխանություններն այս հանգամանքը փորձում են խեղաթյուրել՝ Բագրատ Սրբազանին վերագրելով այն հանգամանքը, որ «դրսից» գումարներ է բերել բարեգործության անվան տակ ու այն մսխել է: Նույնիսկ բարերարին են գտել, կապ հաստատել հետը, որ կարողանան, իբրեւ թե հիմքեր գտնել: Կարճ ասած՝ մեղադրում են փողերի լվացման մեջ: Իշխանությունների ներսում այս հարցը թեժ քննարկվել է, ու վերջիններս պատրաստվում են հայտարարել, թե շենքը չի կառուցվել պատշաճ, այն ժամանակ առ ժամանակ է գործում, սակայն իրական պատմությունը բոլորովին այլ է: Գետահովիտի հոգեւոր-վերականգնողական կենտրոնը կառուցված է գյուղի բարձունքում, աշխատում է պատշաճ եւ ունի լիարժեք կառուցված նոր մասնաշենքեր:

Նախկին ՊՆ շենքը ոչ պետության, այլ հովանավորների միջոցով դարձել է հոգեւոր-վերականգնողական կենտրոն, սակայն իշխանություններն անգամ ցեխ են շպրտում դրական գործերի վրա. բայց, թե առաջիկայում ինչ զարգացումներ կլինեն, դեռեւս վաղ է ասել, սակայն փաստ է, որ իշխանությունները լծված են Բագրատ սրբազանի «չեզոքացման» աշխատանքի ուղղությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հունիսի 18-ին ընդունել է Հայաստանում Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերին: ԱԺ մամուլի ծառայությունից տեղեկացնում են, որ դեսպանն ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում:

Խորհրդարանի ղեկավարը շնորհակալություն է հայտնել դեսպանին Հայաստան-Գերմանիա եւ Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման հարցում ներդրված ջանքերի համար եւ ընդգծել փոխգործակցության կայուն զարգացման կարեւորությունը:

«ՀՀ Ազգային ժողովի եւ Բունդեսթագի միջեւ խորհրդարանական բազմաշերտ համագործակցությունն ու պատգամավորական ակտիվ փոխայցերը, խորհրդարաններում բարեկամական խմբերի առկայությունը, անխոս, վկայությունն են մեր երկրների միջեւ բարձր մակարդակի երկխոսության», - նշել է ԱԺ նախագահը:

Վիկտոր Ռիխտերը բարձր է գնահատել երկու երկրների միջեւ հաստատված փոխգործակցությունը եւ ընդգծել, որ միջխորհրդարանական շփումներն առանցքային դերակատարում ունեն հարաբերությունների խորացման հարցում:

Զրուցակիցները քննարկել են անվտանգային իրավիճակը Հարավային Կովկասում եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման ընթացքը:

Վիկտոր Ռիխտերը վերահաստատել է ԳԴՀ հանձնառությունը՝ աջակցել խաղաղության շուրջ բանակցությունների գործընթացին:

«ՀՀ-ում ընթացող բարեփոխումները եւ Հարավային Կովկասում խաղաղության հաստատումը քաղաքական առաջնահերթություն են», - նշել է դեսպանը:

Մտքեր են փոխանակվել Հայաստան-Գերմանիա համագործակցության ընդլայնման հեռանկարների եւ ընթացիկ ծրագրերի շուրջ: Կարեւորվել է փոխգործակցությունը մշակութային, կրթական, տնտեսական եւ էներգետիկ ոլորտներում:

ԱԺ–ՈՒՄ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Խորհրդարանում ուրբաթ օրը՝ հունիսի 21-ին՝ ժամը 11:00-ին լսումներ կհրավիրվեն:

«Հայաստանի՝ Եվրոպական միությանն անդամակցության հայտ ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկի շուրջ» թեմայով:

Հիշեցնենք, որ նման հանրաքվե կազմակերպելու առաջարկով հանդես է եկել ժողովրդավարական ուժերի հարթակը, որի մասնակից կուսակցություններն են «Հանրապետություն» կուսակցությունը (նախագահ՝ Արամ Սարգսյան), «Հանուն Հանրապետության» կուսակցությունը (նախագահ՝ Արման Բաբաջանյան), «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» կուսակցությունը, (նախագահ՝ Լեւոն Շիրինյան) եւ «Հայաստանի եվրոպական կուսակցությունը» (նախագահ՝ Տիգրան Խզմալյան):

ԻՆՔՆԱԳՆԱՑ ՀՐԱՑԱՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ CAESAR ԶԵՆՔԸ

Երեւանը և Փարիզը պայմանագիր են կնքել ֆրանսիական CAESAR ինքնագնաց հրացանների մատակարարման համար, այս մասին X սոցիալական ցանցում հայտնել է Ֆրանսիայի պաշտպանության նախարար Սեբաստյան Լեկորնուն:

«Մենք շարունակում ենք ամրապնդել մեր պաշտպանական հարաբերությունները Հայաստանի հետ: Ես ջերմ ու արդյունավետ զրույց ունեցա իմ գործընկեր Սուրեն Պապիկյանի հետ:

Նոր կարեւոր իրադարձություն է CAESAR ատրճանակների գնման պայմանագրի ստորագրումը», - նշել է Լեկորնուն:

CAESAR-ը հապավում է, որը ֆրանսերենով նշանակում է «հրետանային համակարգով հագեցած բեռնատար»: CAESAR-ը 155 մմ ինքնագնաց հրետանային միավոր է, որը մշակվել եւ արտադրվել է ֆրանսիական Nexter ընկերության կողմից:

Բացի Ֆրանսիայից, CAESAR ինքնագնաց հրացանները սպասարկում են Սաուդյան Արաբիայի, Ինդոնեզիայի եւ Թաիլանդի բանակները:

CAESAR համակարգը առանձին փամփուշտով լիցքավորման համակարգ է, որը ունակ է ոչնչացնել ե՛ւ հետեւակ, ե՛ւ զինտեխնիկա:

ArmLur.am-ը զրուցել է ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանի հետ, որը ներկայացրել է՝ ինչ է իրենից ներկայացնում զենքը, եւ որն է ստորագրված պայմանագրի օրակարգային հարցը:

CAESAR ինքնագնաց հրացանների մարտավարական եւ տեխնիկական բնութագրերը.

Ընդհանուր չափեր՝ երկարությունը՝ 10 մետր, բարձրությունը՝ 3,7 մետր, օդային փոխադրումների համար՝ 2,7 մետր, լայնությունը՝ 2,55 մետր:

Տեղադրման քաշը մոտ 18 տոննա է:

Կրակի արագություն՝ 6 ռդ/րոպե:

Կրակման հեռավորությունը՝ 4,5-ից 42 կմ:

Ինքնաթիռում գտնվող զինամթերքը 18 պարկուճ է:

Արագությունը մայրուղու վրա՝ 80 կմ/ժ, կոշտ տեղանքում՝ 50 կմ/ժ:

Էներգիայի պահուստ՝ 600 կմ.

Անիվի բանաձեւ՝ 6c6:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՐՁԱԿՎՈՒՄ» Է ՀՅԴ–Ի ՎՐԱ

«Տեւական ժամանակ է՝ նիկոլական իշխանությունը տարբեր ձեւերով հարձակվում է ՀՅԴ-ի վրա՝ օգտագործելով ամենատարբեր մեթոդները, բայց ձեռագիրը նույնն է: Նրանք կեղծիքի, ստի եւ քաղաքական հալածանքների միջոցով, օրինականության շղարշի քողի տակ փորձում են ներկայացնել մեղադրանքներ», - այս մասին ՀՅԴ մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

«Բոլոր հնարավոր մեթոդները կիրառում են, որպեսզի արհեստական, կեղծ քրեական գործեր հարուցեն, հարձակում են կազմակերպում կուսակցության գրասենյակի նկատմամբ: Իրականացվել են մասշտաբային ապօրինի խուզարկություններ, ձերբակալություններ: Այս պահի դրությամբ՝ նիկոլական քննչական համակարգի, իրենց վերահսկողության տակ գտնվող դատավորների կողմից կայացվել է հինգ կալանքի որոշում, ընդ որում՝ տեսակցությունների սահմանափակում է գործում: Ունենք 3 տնային կալանք, 1 գրավով եւ 1 բացակայելու արգելքով խափանման միջոցով անձինք՝ եւ դա միայն Վայոց ձորում», - սնշեց նա:

Պատգամավորն ընգծեց, որ վերջին օրերը հիշեցնում էին բոլշեւիկյան ժամանակահատվածի առաջին շրջանը:

«Թշնամանք սերմանելուն զուգահեռ՝ ամբողջ համակարգը լծված է «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը վարկաբեկելուն», - շեշտեց Արծվիկ Մինասյանը:

ՍԹՈԼՏԵՆԲԵՐԳԸ՝ ՌԴ–Ի ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԵԼՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Յենս Սթոլտենբերգը BBC-ին հայտնել է, որ եթե Չինաստանը չփոխի իր քաղաքականությունը Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի հարցում, ստիպված կլինի բախվել հետեւանքների:

Սթոլտենբերգն ասել է, որ Պեկինը «փորձում է հասնել երկու արդյունքի»՝ ձգտելով աջակցելու թե՛ Ռուսաստանի ռազմական ջանքերին, թե՛ պահպանելու հարաբերությունները եվրոպական երկրների հետ:

«Դա չի աշխատի երկար ժամանակով», - ասել է Սթոլտենբերգը BBC News-ին Վաշինգտոն կատարած իր այցի ժամանակ:

Շվեյցարիայի գագաթնաժողովում, որը տեղի ունեցավ անցած հանգստյան օրերին, տասնյակ երկրներ պարտավորվեցին շարունակելու աջակցությունը Կիեւին, Ռուսաստանը համաժողովն անվանեց ժամանակի իզուր կորուստ եւ հայտարարեց, որ կհամաձայնի խաղաղության բանակցություններին, միայն եթե Ուկրաինան ըստ էության հանձնվի:

Պատասխանելով հարցին, թե ինչ կարող են անել ՆԱՏՕ անդամները Ռուսաստանին Չինաստանի օգնության հարցում, Սթոլտեբերգը պատասխանել է, որ «մշտական խոսակցություն» է վարվում հնարավոր պատժամիջոցների մասին:

Նրա խոսքով՝ Չինաստանը «շատ տեխնոլոգիաներ է տրամադրում, այնպիսին, ինչպիսին է միկրոէլեկտրոնիկան, որոնք կարեւոր նշանակություն ունեն Ռուսաստանի համար հրթիռներ եւ զենք ստեղծելու գործում, որը նա օգտագործում է Ուկրաինայի դեմ»:

Սթոլտենբերգն ավելացրել է, որ «մի ինչ-որ փուլում մենք պետք է մտածենք ինչ-որ տնտեսական միջոցների մասին, եթե Չինաստանը չփոխի իր վարքը»:

Պեկինն արդեն գտնվում է որոշ պատժամիջոցների տակ Ռուսաստանին աջակցելու համար:

Մայիսին Ամերիկայի Միացյալ Նահանգները հայտարարեց սահմանափակումների մասին, որոնք վերաբերելու են չինական եւ հոնկոնգյան մոտ քսան ընկերությունների:

Չինաստանը պաշտպանում է իր բիզնեսը Մոսկվայի հետ՝ հայտարարելով, որ չի վաճառում մահաստիպ զենք եւ «խելամտորեն իրականացնում է երկակի նշանակության ապրանքների արտահանում օրենքներին եւ կանոններին համապատասխան»:

ԿԱՇԱՌՔԻ ԳՈՐԾ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Մեզ հայտի դարձավ, որ հակակոռուպցիոն կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաների կաշառքի գործով: Մասնավորապես, ըստ նախաքննական մարմնի՝ Շահեն Անդրանիկի Պետրոսյանը՝ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ եւ Երեւանի քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Քնարիկ Նորիկի Պետրոսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձիք, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, իրենց իշխանական եւ ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Աշոտ Սերգեյի Պետրոսյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ շինարարական թույլտվություն տրամադրելու եւ գործընթացը հնարավորինս սեղմ ժամկետում կազմակերպելու համար 2023 թվականի հունիսի 30-ին Աշոտ Պետրոսյանից պահանջել են 80.000 ՀՀ դրամ կաշառք, որը վերջինս 2023 թվականի հուլիսի 3-ին անձամբ փոխանցել է Շահեն Պետրոսյանին:

Բացի այդ, Շահեն Պետրոսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր իշխանական եւ ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Արթուր Նշանի Կչրյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ արտադրական նշանակության շենքի կառուցման շինարարական աշխատանքների թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը կազմելու եւ Երեւանի քաղաքապետարան փոխանցելու համար, 2023 թվականի ընթացքում Արթուր Կչրյանից պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ ընդհանուր 1.100.000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, Շահեն Պետրոսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր իշխանական եւ ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով Արթուր Սարգսի Մելքոնյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ Երեւան քաղաքի Շարուրի օժանդակ տնտեսության տուն 34 հասցեում կառուցված ավտոտնակի եւ պարսպի շինարարական աշխատանքների ավարտական ակտերի տրամադրման գործընթացը սեղմ ժամկետներում կազմակերպելու համար, 2023 թվականի ընթացքում Արթուր Մելքոնյանից պահանջել է մոտ 1.000.000 ՀՀ դրամ կաշառք, որից 300.000 ՀՀ դրամը նախապես, ապա 2023 թվականի հունիսի 30-ին եւս 400.000 ՀՀ դրամ կաշառքը վերջինս փոխանցել է Շահեն Պետրոսյանին, ինչից հետո պայմանավորվածություն է ձեռք բերել վերոնշյալ 1.000.000 ՀՀ դրամ կաշառքի մնացած մասը փաստաթղթերը տրամադրելուց հետո փոխանցելու վերաբերյալ:

Շահեն Պետրոսյանը համաձայնություն է ձեռք բերել Երեւանի քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան նրբանցքի 20-րդ տան հասցեի բնակիչ Սամվել Կարապետի Փախանյանի հետ՝ Շահեն Պետրոսյանի կողմից Սամվել Փախանյանի օգտին ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հովանավորչության, այն է՝ Երեւան քաղաքի Արտաշիսյան փողոցի 94/45 հասցեում գտնվող հողատարածքում պարսպի եւ երեք դարպասների կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը սեղմ ժամկետում անխոչընդոտ տրամադրելու դիմաց մանր չափերով՝ 300.000 ՀՀ դրամ կաշառք ստանալու շուրջ, որպիսի գործընթացի իրականացման համար 2023 թվականի մայիսի 22-ին Սամվել Փախանյանը Շահեն Պետրոսյանին մեկ ամիս ժամկետով լիազորել է լինել իր ներկայացուցիչը Երեւանի քաղաքապետարանում, վարչական շրջանում եւ այլ կազմակերպություններում, ինչպես նաեւ ներկայացնել դիմումներ եւ կից փաստաթղթեր:

Ստանալով կաշառքի առարկա հանդիսացող հիշյալ գումարը՝ Շահեն Պետրոսյանը ձեռնամուխ է եղել նշված առաջադրանքի եւ այլ փաստաթղթերի հատկացման համար անհրաժեշտ հիմքերի հավաքագրման եւ հաշվառման գործընթացին, ինչպես նաեւ Սամվել Փախանյանին թույլատրել է առանց համապատասխան քաղաքաշինական թույլտվությունների կատարել պարսպի հիմքի բետոնապատման աշխատանքներ, իսկ 2023 թվականի հունիսի 19-ին Սամվել Փախանյանին տրվել է թիվ 01/18/07/1-Պ-66130-354 նախագծման թույլտվությունը:

Շահեն Պետրոսյանը համաձայնություն է ձեռք բերել Հովսեփ Արթուրի Գյոնջյանի հետ՝ Շահեն Պետրոսյանի կողմից Հովսեփ Գյոնջյանի օգտին ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հովանավորչության, այն է՝ Արթուր Գյոնջյանին անվամբ որպես սեփականություն հաշվառված, փաստացի իր կողմից տնօրինվող՝ Շենգավիթ վարչական շրջանի Նոր Խարբերդի ագեգործական տարածքի 22-րդ փողոցի 82/28 հողամասում բնակելի տան, լողավազանի եւ պարսպի կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը սեղմ ժամկետում անխոչընդոտ տրամադրելու դիմաց մանր չափերով՝ 200.000 ՀՀ դրամ կաշառք ստանալու շուրջ, որպիսի գործընթացի իրականացման համար 2023 թվականի հուլիսի 18-ին կատարված երկու բանկային փոխանցումների միջոցով Հովսեփ Գյոնջյանից ստացել է ընդհանուր 199.600 ՀՀ դրամ, որից հետո ձեռնամուխ է եղել նշված առաջադրանքի եւ այլ փաստաթղթերի հատկացման համար անհրաժեշտ հիմքերի հավաքագրման եւ հաշվառման գործընթացին, ինչի արդյունքում 2023 թվականի հուլիսի 18-ին նրան տրամադրել է թիվ 22/01-Դ84550 նախագծման, իսկ 2023 թվականի օգոստոսի 18-ին՝ թիվ 22/01-Դ100125 շինարարության թույլտվությունները:

Շահեն Պետրոսյանը համաձայնություն է ձեռք բերել Արմեն Աշոտի Հովակիմյանի հետ՝ Շահեն Պետրոսյանի կողմից նրա օգտին ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հովանավորչության, այն է՝ Արմեն Հովակիմյանին պատկանող անշարժ գույքի տարածքում շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը սեղմ ժամկետում անխոչընդոտ տրամադրելու դիմաց մանր չափերով՝ 405.000 ՀՀ դրամ կաշառք ստանալու շուրջ, որպիսի գործընթացի իրականացման համար 2023 թվականի հունիսի 19-ին եւ 28-ին կատարված բանկային փոխանցումների միջոցով ստացել է հիշյալ չափով կաշառքի գումարը, որից հետո ձեռնամուխ է եղել նշված փաստաթղթերի հատկացման համար անհրաժեշտ հիմքերի հավաքագրման եւ հաշվառման գործընթացին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԿՏԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

ԸՆՏԱՆԻՔԸ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ՊՆ-ԻՆ

Շուրջ 2 տարի ԱԱԾ մեկուսարանում կալանքի տակ գտնվող պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միխայել Արզումանյանը, կինը՝ Դիանա Դավթյանը, որդիները՝ Արսեն եւ Ալբերտ Արզումանյանները դատի են տվել Պաշտպանության նախարարությանը:

Մասնավորապես, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջիններս պահանջում են, որ դատարանը ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետի 2023 թ. հուլիսի 12-ի «Ծանուցում» վերտառությամբ թիվ 8 վարչական ակտը վերացնի: Հիշեցնենք, որ 2022 թվականին կալանավորվեց 44-օրյա պատերազմի օրերին Արցախի Պաշտպանության բանակը ղեկավարած Միքայել Արզումանյանը, որին մեղադրանք է առաջադրվել Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում զինվորական պաշտոնեական անփութության համար: Ըստ Քննչական կոմիտեի՝ պատերազմի վերջին տասն օրերին՝ Շուշիի պաշտպանության ընթացքում նա անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ, ինչի հետեւանքով հակառակորդի զինված ուժերն ամբողջությամբ իրենց վերահսկողության տակ են վերցրել քաղաքն ու մատույցները, հայկական կողմն ունեցել է զոհեր եւ վիրավորներ:

Ըստ հաղորդագրության՝ Արզումանյանը չի հանձնարարել զորք տեղակայել Շուշիի պաշտպանական բնագծի չպահվող հատվածում այն դեպքում, երբ իր ենթակայության տակ ունեցել է համապատասխան ներուժը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԵՃԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 29-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հիվանդանոցից ստացվել էր հաղորդում, որ Կոշ գյուղից բուժօգնության է տեղափոխվել դանակահարված մի երիտասարդ: Հաղորդումը փոխանցվել էր ոստիկանության Աշտարակի բաժին, որտեղից էլ օպերատիվ խումբ էր մեկնել Կոշ:

Արագածոտնի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով:

Վարույթի շրջանակում ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Աշտարակի քրեական հետախույզները պարզեցին, որ մայիսի 29-ի գիշերը՝ ժամը 2:30-ի սահմաններում, Կոշից Ավան գյուղ տանող ճանապարհին ճանապարհը չզիջելու եւ ձայնային ազդանշան տալու հետ կապված վեճ է ծագել Կոշ գյուղի երկու բնակչի միջեւ, որոնցից մեկն էլ իր մոտ եղած դանակով մի քանի հարված է հասցրել 20-ամյա երիտասարդին:

Բացատրական աշխատանքի ադյունքում հունիսի 7-ին 22-ամյա դանակահարողը եկել է ոստիկանության Աշտարակի բաժին, որտեղից էլ ներկայացվել է նախաքննական մարմին:

Ձեռնարկվում են միջոցներ՝ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունիսի 17-ին՝ Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո, գծային բաժին է տարվել 36-ամյա Համլետ Ջ.-ն, որը ապրիլի 30-ից ոստիկանության Տաշիրի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը կամ այդ անձի կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը) 2-րդ մասի մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին եւ դատախազությանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 14-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 196 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԾ ՀԱՏՈՒՄՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ

«Ֆեյսբուք» սոցկայքի «Դիլիջանցիք» խմբում տեղադրված են ավտոմեքենային բարձած, գետնին թափված եւ կտրտված, մանրացված վառելափայտի լուսանկարներ, դրան կից գրված են փայտը վաճառող դիլիջանցու հեռախոսահամարները: Լուսանկարներում պատկերված վառելափայտը հաստաբուն հաճարենիներից, թաց կանգուն ծառերից է հատված: Այդ վառելափայտի խորանարդ մետրը Դիլիջան քաղաքում 20 հազար դրամով է վաճառվում: «Դիլիջան» ազգային պարկը բնության հատուկ պահպանվող տարածք է, այնտեղ հատումներն օրենքով արգելված են, սակայն իրականում ազգային պարկում այնքան շատ հատումներ են արել, որ պարկը զբոսայգու է նմանվում: Դիլիջան համայնքի բնակիչները հայտնեցին, որ ներկայումս Հաղարծին գյուղից դեպի Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհ են սարքում, ու նորակառույց ավտոճանապարհի եզրերի բոլոր ծառերը հատել են. դրանք տարածքից արագ հեռացրել են, որպեսզի որպես վառելափայտ՝ ծախեն:

ՄԱՐԶՊԵՏԸ ԽՈՒՍԱՓԵԼ Է ՀԱՐՑԻՑ

Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը նախկինում Կիրանցի բնակիչներին համոզում էր համաձայնել սահմանազատման անվան տակ Կիրանցից Ադրբեջանին տներ, տարածքներ եւ Կիրանցի կամուրջը հանձնելու գործընթացին, համոզում էր բացել՝ ի նշան բողոքի գյուղացիների կողմից Կիրանցում փակած միջպետական ավտոճանապարհը: Մարզպետ Հայկ Ղալումյանին հետեւյալ հարցապնդումն ենք արել. «սահմանազատման աշխատանքները Կիրանցում ավարտվել են, Կիրանցի նորակառույց դպրոցի շենքը ուղիղ գծով քանի՞ մետր հեռավորության վրա է գտնվելու ադրբեջանցի սահմանապահներից»: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պետական լիազորված մարմին»: Մարզպետը պարտավոր էր հայտնել, թե այդ հարցով ո՞րն է պետական լիազորված մարմինը: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցները, այդ թվում՝ Կիրանցի հիմնական դպրոցը, Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայությամբ են գործում:

ԲԱՆՈՒԳՈՐԾ ՉՈՒՆԵՆ, ՀՈՂ ԵՆ ԾԱԽՈՒՄ

Հունիսի 10-ին կայացավ Դիլիջան խոշորացված համայնքի ավագանու հերթական նիստ: Նիստի բոլոր հարցերի վերաբերյալ զեկուցումով հանդես է եկել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը: Օրակարգում հիմնականում Դիլիջան քաղաքում հասարակական կառուցապատման նշանակության հողերի օտարման հարցերն էին, օրակարգի 13 հարցերից 10-ը վերաբերվում էին հողամասերի օտարմանը: Դիլիջան համայնքի հողերը, կասկածելի աճուրդներով, շուկայականից ցածր գներով օտարվում են, որի հետեւանքով՝ համայնքի բյուջե չեն մտնում հարյուրավոր միլիոն դրամներ: Այդ մեծ փողերով Դիլիջան քաղաքում եւ համայնքի 6 գյուղերում օգտակար մեծ աշխատանքներ կարող էին կատարվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԳՐՈՀՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՎՐԱ

Արձակուրդի սեզոնի սկզբում «Կասպերսկի» ընկերությունը պատմում է այն մասին, թե ինչ գրոհներից պետք է զգուշանան հյուրանոցների աշխատակիցներն ու սեփականատերերը: Հաքերները փորձում են գողանալ հաշիվների տվյալները կամ համակարգիչները վարակել վնասաբեր ծրագրերով՝ էլեկտրոնային փոստով նմանակելով նախկին կամ հավանական հյուրերի առավել տիպիկ հարցումները կամ բողոքները: Հաշիվների գողացված տվյալները հետագայում կարող են օգտագործվել այլ խարդախ սխեմաներում կամ վաճառվել այլ չարագործների. դարքնետում նման մուտքանունների եւ գաղտնաբառերի բազաները պահանջարկ ունեն:

Ֆիշինգային նամակներ: Որպես կանոն, նամակագրությունն ընթանում է երկու ուղղությամբ՝ ցանցահեները կամ բողոքում են, կամ ճշտում մանրամասները: Գրոհողները կամ դժգոհում են մատուցված ծառայություններից կամ լրացուցիչ տեղեկություններ պահանջում հյուրանոցի ծառայությունների եւ դրանց արժեքի վերաբերյալ: Հարցման տարբերակները բազմաթիվ են, եւ յուրաքանչյուր հաղորդագրության թեման եւ տեքստը գրեթե միշտ եզակի է: Բացի հյուրանոց տեղափոխման, սննդի եւ գների վերաբերյալ սովորական հարցերից՝ կեղծ հյուրերին կարող են հետաքրքրել, օրինակ, երեխաների համար խաղասենյակի, հեռավար աշխատողների համար հանգիստ տարածքի, ազգային-պատմական ուղղվածության թեմատիկ սենյակի առկայությունը: Ֆիշինգային նամակները կարող են պարունակել լուսանկարներ կամ տեսանյութեր: Նպատակը աշխատակիցներին դրդելն է, որ նրանք սեղմեն վնասաբեր ԾԱ պարունակող հղումները կամ բացեն այդպիսի պարունակությամբ կցված ֆայլերը: Նման «առաքումները» կարող են գալ իբր ամրագրման հանրաճանաչ համակարգերից ծանուցումների ձեւաչափով, օգտատերերի ուշադրության չարժանացած մեկնաբանություններին պատասխանելու խնդրանքով:

Վնասաբեր նամակներ: Ցանցահեները առավելապես օգտագործում են հղումներ դեպի վնասաբեր պարունակությամբ ֆայլեր, որոնք պահվում են ֆայլերի փոխանակման օրինական կայքերում: Ավելի հազվադեպ պահում են հղումները քողարկելու տարբեր եղանակներ, օրինակ, կարճ URL-ներ: Հղումները կարող են լինել ինչպես նամակի տեքստում, այնպես էլ կցված, օրինակ, PDF փաստաթղթում: Եթե զոհն անցնում է հղումով եւ ներբեռնում ֆայլը կամ բացում կցված փաստաթուղթը, նրա սարքում կարող են հայտնվել տարատեսակ վնասաբեր ծրագրեր, որոնք, որպես կանոն, գաղտնաբառեր գողանալու գործառույթ ունեն: Փորձագետները գրանցել են այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են Xworm բեքդորը եւ RedLine ստիլերը:

Բազմափուլ մոտեցում: Որոշ դեպքերում ցանցահեներն օգտագործում են մեթոդներ, որոնք ավելի շուտ բնորոշ են թիրախային գրոհներին. նրանք վնասաբեր հղումն ուղարկում են ոչ առաջին, ոչ էլ նույնիսկ երկրորդ նամակում:

Զոհի զգոնությունը քնեցնելու համար նրանք նամակագրության մեջ են մտնում՝ ուղարկելով մեկ, իսկ երբեմն էլ մի քանի կարճ «մաքուր» հաղորդագրություններ, որոնցում հարցեր են տալիս հյուրանոցում տեղավորման պայմանների վերաբերյալ, իսկ հետո՝ վնասաբեր ֆայլ ներբեռնելու հղմամբ նամակ:

«Նման սպառնալիքը բացահայտելու լրացուցիչ դժվարությունն այն է, որ գրոհողները չունեն գործարար նամակագրության համար համոզիչ հատուկ հասցե գրանցելու կարիք: Հյուրանոցների աշխատակիցները սովոր են ամեն օր էլեկտրոնային փոստի անվճար ծառայությունների միջոցով հյուրերից դիմումներ կամ բողոքներ ստանալ եւ արագ արձագանքել դրանց: Սա մեծացնում է նման ծուղակի մեջ ընկնելու հավանականությունը»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության սպամի վերլուծաբան Անանա Լազարիչեւան:

«Կասպերսկի»-ն բիզնեսներին խորհուրդ է տալիս աշխատակիցներին սովորեցնել կիբեռանվտանգության հիմունքները, օրինակ, ֆիշինգային գրոհների նմանակում իրականացնել, որպեսզի նրանք կարողանան տարբերակել կեղծ էլեկտրոնային նամակները: Պետք է օգտագործել փոստային սերվերների անվտանգության՝ ֆիշինգից պաշտպանության գործառույթով լուծումներ, օրինակ, Kaspersky Seðurity փոստային սերվերների համար: Բացի այդ, խորհուրդ է տրվում տեղադրել լուծումներ, որոնք ապահովում են համալիր պաշտպանություն ֆայլային, փոստային, ցանցային եւ վեբ սպառնալիքներից, օրինակ, Kaspersky Security բիզնեսի համար կամ Kaspersky Endpoint Security Cloud:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԹՈՒՄՈ ԼԱԲԵՐ»-Ի ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՂԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՍԱՐՔԵՐ

Հայաստանի գյուղական համայնքներում կտեղադրվեն 26 IoT (բանացանց) կլիմայական սարքեր, որոնք կհավաքագրեն կլիմայական տվյալներ, որոնք օգտակար կլինեն եղանակային ճգնաժամերի հետազոտության, կանխարգելման եւ կանխատեսման, ինչպես նաեւ տեղի կլիմայական օրինաչափությունների վերլուծության համար:

Այս նախագիծն իրականացվում է «Թումո լաբեր»-ի Կլիմայական ցանց նախաձեռնության կողմից: Թումո լաբերը ինժեներություն եւ տեխնոլոգիաներ անվճար ուսուցանող կրթական կենտրոն է՝նախատեսված 18-ից բարձր անձանց համար:

IoT սարքերը տեղադրվում են «Թումո» տուփերի (փոքր «Թումո» կենտրոններ են կառուցված վերամշակված կոնտեյներներից) վրա, որոնք փոքր համայնքներում ծառայում են որպես «Թումո» արբանյակներ: Այս սարքերն արդեն տեղադրվել են հինգ Թումո տուփերի վրա՝ Արթիկում, Մարալիկում, Ազատանում, Փանիկում եւ Վազգեն Սարգսյանի համալսարանում:

IoT կլիմայական սարքերը ստեղծած եւ տեղադրած «Թումո լաբեր»-ի ուսանողներն անցել են հատուկ թրեյնինգ, որի ընթացքում սովորել են մշակել սարքային եւ ծրագրային ապահովում այս սարքերի համար: IoT սարքերը չափում են ջերմաստիճանը, խոնավությունը եւ ճնշումը, օդի որակը, արագությունը, ուղղությունը, անձրեւը, լույսի ուժգնությունը ու սպեկտրային տեղեկատվությունը: Այս տվյալները կլիմայական ցանցի կայքում (climatenet.am) բաց են բոլորի համար, ովքեր ցանկանում են օգտագործել եւ վերլուծել դրանք: Հավաքագրված տվյալները կարող են օգնել կանխատեսել եղանակային խիստ պայմանները եւ նվազեցնել դրանց կողմից առաջացրած վնասները: Ապագայում «Թումո լաբեր»-ում ուսանողները կարող են օգտագործել այս տվյալները տարբեր տեսակների եղանակային քարտեզներ ստեղծելու համար:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 44 պատահար. 72 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԲԻԶՆԵՍԻՆ

«Կոնվերս» բանկը ներկայացրել է պարտատոմսերի թողարկմամբ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունը եւ այդ հարցում իր փորձառությունը: Սա լավագույն այլընտրանքն է պարտքի դիվերսիֆիկացման տեսանկյունից, որի շնորհիվ, միաժամանակ, ընկերությունը դառնում է առավել ճանաչելի կապիտալի շուկաներում, բարձրանում է վստահությունն ընկերության նկատմամբ:

«Կոնվերս» բանկի կորպորատիվ ներդրումային բանկային ծառայությունների բաժնի պետ Էլեն Քարիմյանի խոսքով՝ միջոցներ ներգրավելու այս ուղին բիզնեսին հնարավորություն է տալիս որոշակիորեն անկախ լինել բանկային վարկային պրոդուկտներից ու ավելի լավ կառավարել ներգրավված միջոցները, ինչպես նաեւ ստեղծում է կորպորատիվ կառավարման նոր մշակույթ:

«Սա բիզնեսի զարգացման նպատակով ներդրումների ներգրավման լավագույն եղանակներից է, որը հնարավորություն է տալիս միջոցներ ներգրավել առանց էական հավելյալ ծախսերի, առանց գրավի ու երաշխավորության, իսկ պարտատոմսերի շրջանառման ընթացքում չմարել անվանական արժեքը՝ այդ գումարն ուղղելով բիզնեսի զարգացմանը»,- ասել է նա:

«Եվրոթերմ» ընկերության տնօրեն Վահե Ղազարյանը ներկայացրել է պարտատոմսերի թողարկման հարցում բանկի հետ համագործակցությունը: «Կոնվերս» բանկի աջակցությամբ այդ ընկերությունը թողարկել, հաջողությամբ տեղաբաշխել եւ ցուցակագրել է 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմս:

Նրա խոսքով՝ «պարտատոմսերի թողարկումը նոր հնարավորություններ է ստեղծում տնտեսվարողների համար, սովորական կարճաժամկետ նախագծերից հնարավոր է դառնում անցում կատարել երկարաժամկետ ռազմավարական նախագծերի մշակմանն ու իրականացմանը»:

Անդրադարձ է կատարվել նաեւ պետական սուբսիդավորման ծրագրից օգտվելու հնարավորությունը: Դրա շրջանակում պարտատոմսերի՝ բորսայում ցուցակվելուց հետո տնտեսվարողը ստանում է սուբսիդավորում թողարկման անվանական արժեքի 2%-ի, իսկ շրջանառման տարիների համար՝ 3-ական տոկոսի չափով:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՐՀԵՂԵՂԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

«Հայէկոնոմբանկը» 100 մլն դրամի օգնություն է հատկացրել Լոռու եւ Տավուշի մարզերում մայիսի 26-ին տեղի ունեցած ջրհեղեղի ծանր հետեւանքներից տուժած բնակիչներին:

Նվիրաբերված միջոցները փոխանցվել են աղետից տուժածներին աջակցելու նպատակով ՀՀ Ֆինանսների նախարարությունում բացված գանձապետական հաշվին:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»-Ը ՄԻԱՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հպարտությամբ տեղեկացնում ենք, որ, նպատակ ունենալով բարձրացնել մեր աշխատանքի թափանցիկությունը եւ ստանդարտացնել ածխաթթու գազի արտանետման հաշվարկը, «Արդշինբանկը» միանում է Ածխաթթու գազի արտանետման հաշվառման ֆինանսական համագործակցությանը (PCAF):

Ածխաթթու գազի արտանետման հաշվառման ֆինանսական համագործակցությունը (PCAF) գործընկերություն է ֆինանսական հաստատությունների միջեւ ամբողջ աշխարհում, որի նպատակն է բացահայտել եւ ներդաշնակ գնահատական տալ ներդրումների եւ վարկավորման արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումների մասին տեղեկատվությանը: Ունենալով ավելի քան 480 ֆինանսական հաստատություն 6 մայրցամաքներից՝ այս խումբը արագ աճում է Հյուսիսային Ամերիկայում, Լատինական Ամերիկայում, Եվրոպայում, Աֆրիկայում եւ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Միանալով PCAF-ին՝ մենք ձգտում ենք հաշվառել եւ բացահայտել մեր կողմից ֆինանսավորվող արտանետումների մասին տեղեկատվությունը: Այս պարտավորությունը համընկնում է մեր բնապահպանական օրակարգի հետ՝ ընդգծելով մեր հավատարմությունը պատասխանատու ներդրումներին եւ վարկավորման պրակտիկայի արդյունքում առաջացած կլիմայի փոփոխությունները մեղմացնելուն:

PCAF-ին անդամակցությունը մեզ թույլ է տալիս առավել հիմնավորված եւ հավակնոտ կլիմայական նպատակներ դնել՝ ցույց տալով, որ մենք առաջինն ենք ֆինանսական հատվածում՝ ցածր ածխաթթվային տնտեսությանը անցման մեջ:

«Ես ուրախությամբ հայտնում եմ, որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն PCAF-ի հետ ռազմավարական համագործակցության մեջ է մտնում ածխաթթու գազի արտանետման հաշվառման համապարփակ նախաձեռնություն սկսելու վերաբերյալ: Այս կարեւոր համագործակցությունը կոչված է բարելավելու մեր աշխատանքը շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ՝ ջերմոցային գազերի մասին տեղեկատվության առավել ճշգրիտ եւ որակյալ բացահայտման հաշվին:

Այս նախաձեռնությունը վկայում է մեր հավատարմության մասին կայուն զարգացմանը եւ պատասխանատու բիզնեսի վարմանը: Եվ մենք հավատում ենք, որ այս գործընկերությունը ոչ միայն կբարելավի մեր թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բնապահպանական հաշվետվության մեջ, այլեւ կսահմանի համապատասխան ուղեգիծ ֆինանսական հատվածում:

«Արդշինբանկը» հպարտ է, որ կատարել է այս նշանակալի քայլն առաջ՝ ամրապնդելով մեր հավատարմությունը բնապահպանական պատասխանատվությանն ու կայուն աճին», - ասաց «Արդշինբանկի» վարչության նախագահ Արտակ Անանյանը:

«Արդշինբանկի» մասին

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկը» ունի ավելի քան 380.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1.700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում:

«Արդշինբանկը» ստանձնել է այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրումներ կատարելու պարտավորությունը, ինչը փաստում է բանկի որդեգրած քաղաքականությունը դեպի կանաչ բանկինգի զարգացում: Բանկի գործառնական կառուցվածքը հիմնված է սոցիալական եւ բնապահպանական պատասխանատվության վրա՝ հզոր կորպորատիվ կառավարման համադրությամբ: Այս պարտավորությունը արտացոլում է «Արդշինբանկի» հավատարմությունը կայուն զարգացման սկզբունքներին եւ ցույց է տալիս, որ բանկը շարժվում է ճիշտ ուղղությամբ:

PCAF-ի մասին

Ածխաթթու գազի արտանետման հաշվառման ֆինանսական համագործակցությունը կամ PCAF-ը գործարկվել է 2019 թվականի սեպտեմբերին: Ներկայումս 480 ֆինանսական կազմակերպություն միացել են PCAF նախաձեռնությանը: PCAF մասնակիցները միասին աշխատում են մշակել Ջերմոցային գազերի հաշվառման եւ հաշվետվության գլոբալ ստանդարտ՝ սեփական ներդրումների եւ վարկավորման արդյունքում առաջացած ջերմոցային գազերի արտանետման բացահայտման եւ հաշվառման համար:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 08 հուլիսի 2024 թվականին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. Լոտ՝ ՀՀ, ք.,Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 13 շենք, 29 հասցեում գտնվող 80,6 քմ բնակարան, Լոտի մեկնարկային գինը՝ 32300000 (երեսուներկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր, Հ. Քոչարի փողոց, 16 շենք, 30 հասցեում գտնվող 101,6 քմ բնակարան, Լոտի մեկնարկային գինը՝ 50000000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am , www.borsa.am

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

ՆԿԱՐԻՉ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ SarGiz-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հուլիսի 1-ին՝ ժամը 19:00-ին, Իգիթյանի անվան գեղագիտության կենտրոնում (Աբովյան 13) կկայանա նկարիչ, քանդակագործ Գագիկ Սարկիսյանի՝ SarGiz-ի անհատական ցուցահանդեսի պաշտոնական բացումը:

Ցուցահանդեսի ընթացքում արվեստասերները հնարավորություն կունենան դիտել երջանկահիշատակ արվեստագետի մի քանի տասնյակ աշխատանքներ, որոնց շնորհիվ պատկերացում կկազմեն SarGiz-ի թողած հարուստ ժառանգության մասին: Իրադարձության նախաձեռնությունը Սարկիսյանի ընտանիքինն է:

Ցուցահանդեսի մուտքն ազատ է: Այն կտեւի մինչեւ հուլիսի 4-ը:

«Արվեստը կրում է ժամանակի բոլոր շերտերի կարեւորությունը, բոլոր ժամանակների մշակութային կապը, մեկը մյուսին լրացնելու կարեւորությունը, ինչպես նաեւ, մեկը մյուսին ժխտելու անսպասելիությունը:

Արծաթը, պղնձի զարդանախշերը ստանում էին պատկերների մի նոր մեկնաբանություն, ստեղծելով կոմպոզիցիաների ներդաշնակ համայնապատկեր: Գույնը, գիծը, թափանցիկ միջնադարյան հայացքները, մաշված որմնանկարների ոսկեպատ - լույսը շշնջում են Աստծո խորհուրդների գանձարանում, պատկերները ստանում են մի նոր երանգ, կարեւորություն հաղորդելով արվեստին: Եթե արվեստը մարդու հոգու հայելին է, ապա Գագիկի ստեղծած արվեստում մենք մասնակցում ենք նրա անսահման սիրո զգացմունքների արտահայտմանը, որոնք կմնան իբրեւ արվեստի գլուխգործոցներ իր ժամանակի ու ժամանակից դուրս տիեզերական լռության ներքո...», - Գագիկ Սարկիսյանի մասին նշում է նրա ընկեր, նկարիչ Արմեն Խոջոյանը:

«Ապշեցուցիչ էր արհեստի ցանկացած տեսակում նրա աշխատելու կարողությունը: Բայց ավելի զարմանալի էր, երբ նրա արհեստը օգնության էր հասնում արվեստին: Թերթավոր պղնձից թեթեւ, մի շնչով արված անհավանական բարդության քանդակները, իդեալական ըստ մտահղացման եւ իրականացման: «Տրոյական նժույգը» հիասքանչ եւ բացառիկ կոմպոզիցիան ապշեցնում է իր բացարձակ գեղագիտությամբ: Հիանալի են կենդանիների պղնձե քանդակները՝ցլի, խոյի, քարայծի: Տարօրինակ եւ արտասովոր է «Խաղաղաբերը» քանդակը: Կոլաժները: Դա նույնպես «Մեծ մարդու» գործ է: Կիրառել հինավուրց առարկաները, կահ-կարասին, փայտի ճաքերով կտորները, պղնձե թասերն ու գավերը, եւ այդ իրենց դարն ապրած առարկաներից ժամանակակից, կենսաշունչ եւ արդեն ժամանակային շրջանակներից դուրս ինչ-որ բան արարելը՝ ահա եւս մի նվաճված նպատակ, եւս մի գրավված ուղի: Գեղանկարչությունը: Բազում մտքեր, իրականացված տարակերպ կտավներում՝ գունավոր Բուդդաները եւ ցնորական բնանկարները: Իր թռռների քնքուշ եւ զարմանալիորեն գորովալից խմբանկարը: Թեթեւություն եւ բարդություն, գաղտնիք եւ ցանկացած հայացքի համար բաց գաղափար ահա անհամատեղելիի համատեղումը նրա նկարներում»,- այսպես է բնութագրում SarGiz-ի արվեստը նկարիչ Աննա Ադիյանը:

Նշենք, որ Գագիկ Սարկիսյանը ծնվել է 1957 թ.: 1979 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: 1984-1992 թթ. աշխատել է Հնությունների վերականգման կոմիտեում, որպես փայտամշակման արվեստանոցի ղեկավար: Աշխատանքներ է իրականացրել Երեւանում, Աշտարակում, մասնակցել է Հառիճի եկեղեցու ձեւավորմանը: 1993 թ. հրավիրվում է Մոսկվա «Ուսադյբա Վալուեվա» վերականգման աշխատանքների մասնակցելու: 2000 թ.-ից մասնակցում է Սանկտ-Պետերբուրգում հայ նկարիչների ցուցահանդեսներին: 2005 թ.-ից սկսած մասնակցում է Մոսկվայում «Արտմանեժ» ցուցահանդեսին: 2006 թ.-ից մասնակցում է ՌԴ պատմության թանգարանում Հ. Իգիթյանի կազմակերպած ցուցահանդեսին: 2021 թ. հրավիրվում է «Մաչանենց» միջազգային սիմպոզիումին: Մահացել է 2023 թվականին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՄԻ ՎԻՇԱՊԱՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության համակարգմամբ անցկացվող «Եվրոպական հնագիտության օրեր» ծրագրի շրջանակում «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում բացվել է «Մի վիշապաքարի պատմություն» խորագրով ցուցադրություն:

Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարության հուշարձանների պահպանության վարչության պետի տեղակալ Լուսինե Իգիթյանը: Նրա գնահատմամբ՝2022 թ.-ից իրականացվող «Եվրոպական հնագիտության օրեր» ծրագիրը Հայաստանում հնագիտությամբ հետաքրքրվողների եւ սիրահարների համար հաջողված նախագիծ է:

Մ.թ.ա. III-I հազարամյակով թվագրվող վիշապքարը գտնվում է «Մեծամոր»-ի թանգարանի բակում: Այն հայտնաբերվել է Լճաշեն գյուղի տարածքում: Վիշապաքարի հայտնաբերման պատմությունը ներկայացրել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Արտավազդ Ջաքյանը: Ըստ նրա՝ վիշապաքարը գտնվել է Լճաշեն գյուղից 2,5 կմ հարավ-արեւմուտք՝ «Համալիր տարածք» կոչվող գոգավոր տեղանքից 1980 թ. ջրատար խողովակներ տեղափոխելիս, եւ հետազոտվելուց հետո բերվել է «Մեծամոր» թանգարան:

Հայկական լեռնաշխարհին հատուկ են վիշապաքարերը, որոնց բարձրությունը հասնում է մինչեւ 5 մետրի. դրանք ունեն ձկան կամ ցլի տեսք, հանդիպում են նաեւ օձի, արագիլի տեսք ունեցողները:

Վիշապաքարերը գտնվել են հիմնականում լեռների բարձր գագաթներին, աղբյուրների, լճերի եւ ջրամբարների մոտ: Վիշապաքարերը մեծ հետաքրքրություն են առաջացնում, ոչ միայն Հայաստանում այլեւ միջազգային հնագիտության մեջ:

Հնադարյան հուշակոթողների ծիսապաշտամունքային նշանակությունը, վիշապաքար բառի ստուգաբանությունը եւ տեսակները ներկաներին ծանոթացրել է հնագետ /պ.գ.դ.պ/ Աշոտ Փիլիպոսյանը:

Լճաշենի դամբարանի գտածոների, վիշապաքարերի նմուշներով ցուցադրությունը բաց կլինի մինչեւ սեպտեմբեր:

«Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառումը Հայաստանում անցկացվել է հունիսի 14-16-ը ՀՀ հնագիտական վայրերում, թանգարաններում, արգելոց-թանգարաններում եւ այլ տեղերում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԲԱՊԵՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՌԱՋԻԿԱ ԽԱՂԵՐԻՆ

Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային թիմի հարձակվող Կիլիան Մբապեն հնարավոր է բաց թողնի Եվրո-2024-ի խմբային փուլի մյուս հանդիպումները:

Այս մասին գրում է Le Figaro-ն: Մբապեն չի մասնակցի խմբային փուլի առաջիկա երկու հանդիպումներին Ֆրանսիայի ընտրանու մեկնարկային՝Ավստրիայի դեմ խաղում ստացած քթի վնասվածքի պատճառով:

Եվրոպայի առաջնության խմբային փուլի առաջին խաղում Ֆրանսիան նվազագույն հաշվով հաղթեց Ավստրիային: Խմբային փուլում Ֆրանսիայի հավաքականը կխաղա Նիդեռլանդների եւ Լեհաստանի հավաքականների հետ:

Եվրո-2024-ի փլեյ-օֆֆի հանդիպումները կմեկնարկեն հունիսի 29-ից:

ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

Հայազգի գործարար եւ մարզիկ Վանիկ Երանոսյանն ընտրվել է Օդեսայի հունահռոմեական ոճի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ: Այս մասին հայտնի է դարձել Օդեսայի հունահռոմեական ըմբշամարտի ֆեդերացիայի «Ֆեյսբուք»-ի էջում տեղ գտած հրապարակումից:

«Ուրախ ենք տեղեկացնել, որ ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքներով Վանիկ Երանոսյանն ընտրվել է Օդեսայի շրջանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ: Շնորհավորում ենք Վանիկ Երանոսյանին այս կարեւոր իրադարձության կապակցությամբ եւ մաղթում հաջողություն նոր պաշտոնում: Նրա բազմամյա փորձն ու սպորտին նվիրվածությունը կդառնա Ուկրաինայում հունահռոմեական ոճի ըմբշամարտի հետագա զարգացման բանալին»:

ՈՎՔԵՐ ԿԼԻՆԵՆ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Շվեյցարական Նիոն քաղաքում կայացել է ֆուտբոլի ՈՒԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլի վիճակահանությունը:

Հայաստանի առաջնության փոխչեմպիոն Երուանի «Նոա»-ի մրցակիցը որակավորման փուլում կլինի Հյուսիսային Մակեդոնիայից «Շկենդիա»-ն:

Երեւանի «Ուրարտու»-ի մրցակիցը որակավորման առաջին փուլում կլինի էստոնական «Կալեւ Տալին»-ը:

Հանդիպումների ժամանակացույցը դեռեւս հայտնի չէ:

ՉԼ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայացել է ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի որակավորման փուլի վիճակահանությունը: «Փյունիկի» մրցակիցը Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում կլինի Մինսկի «Դինամոն»: Առաջին հանդիպումը «Փյունիկ»-ի համար լինելու է արտագնա ու կայանալու է հուլիսի 9-ին կամ 10-ին, պատասխան խաղը՝տնային՝ամսի 16-ին կամ 17-ին:

● *Հունիսի 21-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ի զեն» հոռետեսական կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԵԿԱՄՈՒՏ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում եկամտահարկի վերադարձը:

Սիմա Բաղդասարյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկառուին /համավարկառուներին/ եկամտային հարկի վերադարձը գանձապետարանը իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ուղեկցող գրությունը (որով ներկայացվում է վճարման հանձնարարականը) ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ ենք համարում նշել, որ հիմնականում վերադարձն իրականացվում է վերոնշյալ գրությունը գանձապետարան մուտքագրման օրը կամ հաջորդ աշխատանքային օրը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գրությունը ստացվել է բանկային օրվա ավարտից հետո:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ասպիրանտուրայի ընդունելությունը ե՞րբ է կատարվում:

Աննա Առաքելյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեռակա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները, ինչպես առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի դեպքում, ԵՊՀ-ն ներկայացնում է դիմորդներին ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը այցելել է Ջաջուռ՝ Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան: Թանգարանի հուշատետրում մաեստրոն գրառում է արել եւ այցելությունը մեկնաբանել՝ «Նորից հանիպեցի Մինասին...»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.6.2024**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*